Medi-Cal-ի դիմող Միացյալ Նահանգների քաղաքացիները եւ քաղաքացի դարձած անձինք պարտավոր են ապացույց ներկայացնել քաղաքացիության, ինչպես նաեւ ինքնության մասին

Նոր օրենքն ասում է՝ Medi-Cal-ի դիմողների մեծամասնությունը, որ Միացյալ Նահանգների քաղաքացի է կամ քաղաքացի դարձած անձ, պարտավոր է ապացույց ներկայացնել քաղաքացիության, ինչպես նաեւ ինքնության մասին: Կարդացեք ներքեւում, տեղեկանալու համար, արդյո՞ք այս օրենքը Ձեզ համար է:

Եթե դուք Միացյալ Նահանգների քաղաքացի չեք, այս օրենքը ձեզ համար ի զորու չէ:

Նոր օրենքը չի կիրառվում Միացյալ Նահանգների քաղաքացիների կամ քաղաքացի դարձած այն անձանց համար, որոնք մտնում են ներքոհիշյալ կատեգորիաների մեջ.

- Որեւէ անձ, որն ունի
  - Լրացուցիչ Ապահովագրության Եկամուտ (Supplemental Security Income, SSI)
  - Լրացուցիչ Medicare
  - Սոցիալական Ապահովության Հաշմանդամության ապահովագրություն (Social Security Disability Insurance, SSDI)
  - Սոցիալական Ապահովության Հանգստյան եւ Վերապրողների ապահովագրություն (Social Security Retirement and Survivors Insurance, RSI - Title II), համապատասխան իրենց անձնական Հաշմանդամության
- 21 տարեկանից փոքր որեւէ անձ, որը դիմում է Անչափահասների Խորհրդի Ծառայություններին (Minor Consent Services)
- Medi-Cal ունեցող կանանցից ծնված նորածինները
- Որբանոցում գտնվող (Children in Foster Care) կամ Որդեգրման ընթացքի (Adoption Assistance) մեջ գտնվող կամ Kin-GAP ունեցող երեխաները
- Լքված նորածինների ծրագրում (Abandoned Baby Program) գտնվող նորածինները
- CalWORKs-ի նպաստառուները

Ի՞նչ՝ եթե ես վերեւում նշված մարդկանցից մեկը չեմ:

Եթե դուք Միացյալ Նահանգների քաղաքացի եք կամ քաղաքացի դարձած անձ, դուք պարտավոր եք քաղաքացիության, ինչպես նաեւ ինքնության մասին ապացույց ներկայացնել Medi-Cal-ին իրավասու լինելու համար: (Տես էջ 3-ի քաղաքացիության եւ ինքնության մասին ընդունելի ապացույցի ցուցակը):

Դուք չեք կարող ստանալ Medi-Cal-ի ամբողջական նպաստներ, մինչեւ ապացույց չներկայացնեք:

Միացյալ Նահանգների քաղաքացի դարձած անձանց մեջ են մտնում մարդիկ, ովքեր ծնվել են Ամերիկյան Սամոայում (American Samoa), ներառյալ Սվեյն կղզին (Swains Island) եւ որոշ մարդիկ Հյուսիսային Մարիանա կղզիների Հասարակապետությունից (Commonwealth of the Northern Mariana Islands):

Ի՞նչ՝ եթե ես Միացյալ Նահանգների քաղաքացի չեմ:

Եթե դուք Միացյալ Նահանգների քաղաքացի կամ քաղաքացի դարձած անձ չեք, դուք պարտավոր եք ներկայացնել միայն այն նույն փաստաթղթերը, որոնք ձեզանից պահանջվում էին նախապես: Ոչինչ չի փոխվել:

Ինչպե՞ս կարող եմ քաղաքացիության մասին ապացույց ձեռք բերել:

Եթե դուք ծնվել եք Կալիֆորնիայում, հնարավոր է, որ քաւունքին ունենա ձեր ծննդյան արձանագրությունը: (Ծննդյան արձանագրությունը ապացույց է քաղաքացիության մասին):

Կալիֆորնիայի ծննդյան գրանցամատյանին խնդրագիր ներկայացրեք, որպեսզի քաւունքիից պահանջեն ձեր ծննդյան արձանագրությունը: Հետո փոստով ուղարկեք կամ անձամբ տարեք այն ձեր տեղական Սոցիալական Ապահովության ծառայության գրասենյակ: Եթե ծննդյան արձանագրությունը չի գտնվում, դուք պետք է ներկայացնեք քաղաքացիության մասին ուրիշ ապացույց: Տես էջ 3-ի քաղաքացիության եւ ինքնության մասին ընդունելի ապացույցի ցուցակը:

Եթե դուք չեք ծնվել Կալիֆորնիայում, քաւունքիից պահանջեք ապացույց քաղաքացիության մասին: Կապվեք քաւունքիի հետ՝ տեսնելու համար, թե նրանք գտել են ձեր համապատասխան ծննդյան արձանագրությունը՝ նախքան ծննդյան վկայականի համար վճարելը:

Ի՞նչ՝ եթե չեմ կարող քաղաքացիության կամ ինքնության մասին ապացույց ներկայացնել:

Առայժմ պետք է դիմեք, իսկ հետո ապացույց ներկայացնեք:

Ամբողջական Medi-Cal չի կարող տրվել ձեզ, մինչեւ ձեր կողմից քաղաքացիության եւ ինքնության մասին ապացույց ներկայացնելը: Եթե դուք չեք կարող ներկայացնել ձեր ապացույցը տրամաբանական ժամանակահատվածի ընթացքում, բայց դուք բավարարում եք մնացած բոլոր պահանջներին, դուք կարող եք միայն սահմանափակ նպաստներ ստանալ: Սահմանափակ նպաստներն ընդգրկում են շտապ օգնության, հղության հետ կապված եւ երկարաժամկետ խնամքի ծառայությունները:

Եթե դուք ապացույց ներկայացնեք ձեր դիմելու ամսաթվից մինչեւ մեկ տարի ժամանակահատվածում, Medi-Cal-ի ձեր նպաստները՝ սկսյալ ձեր դիմումնագրի ամսաթվից, կփոխվեն եւ կդառնան ամբողջական:

Եթե դուք ունեցել եք բժշկական ծախսեր մինչ դուք կստանայիք ձեր քաղաքացիության եւ ինքնության փաստաթղթերը, Medi-Cal-ը կարող է վճարել ձեր ծախսերի համար: Ձեր հարցումների պատասխանների համար զանգահարեք Առողջապահական Խնամքի Ծառայությունների Բաժանմունքի (Department of Health Care Services) օժանդակող ծառայություններին (Beneficiary Services) (916) 403-2007 հեռախոսահամարով:

Արդյո՞ք երեխաները եւս պետք է ապացույց ներկայացնեն քաղաքացիության եւ ինքնության մասին:

Այո: Եթե ձեր երեխան ծնվել է Կալիֆորնիայում, քաւնքիից պահանջեք նրա ծննդյան արձանագրությունը ընդունել իբրեւ քաղաքացիության մասին ապացույց:

Եթե ձեր երեխան 16 տարեկանից փոքր է եւ դուք լրացրել եւ ստորագրել եք ձեր երեխայի ծննդյան վայրով եւ ամսաթվով Medi-Cal-ի դիմումնագիրը կամ Healthy Families/Medi-Cal համատեղ դիմումնագիրը, դուք կարիք չունեք ներկայացնել ինքնության մասին ապացույց: (Ստորագրված այս դիմումնագիրը ձեր երեխայի ինքնության մասին ապացույց է): Դուք դեռեւս պետք է քաղաքացիության մասին ապացույց ներկայացնեք:

Եթե ձեր երեխան 16 տարեկանից մեծ է, դուք պետք է ձեր երեխայի համար ինքնության մասին ապացույց ներկայացնեք: Տես էջ 3:

Եթե ձեր երեխան դիմում է CHDP Gateway-ի, School Lunch Program-ի կամ Healthy Families/Medi-Cal համատեղ դիմումնագրի միջոցով, ապա դուք պարտավոր չեք ապացույց ներկայացնել, քանի դեռ ձեր քաւնքիի սոցիալական ծառայությունների գրասենյակը դա ձեզանից չի պահանջել:

Ի՞նչ՝ եթե ես Medi-Cal-ի անմիջական կարիք ունեմ:

Բազմաթիվ հղի կանայք եւ երեխաներ կարող են ժամանակավոր Medi-Cal ստանալ, մինչ քաւնքիին կվերանայի ձեր դիմումնագիրը:

Արդյո՞ք պարտավոր եմ ամեն տարի քաղաքացիության եւ ինքնության մասին ապացույց ներկայացնել:

Ոչ: Դուք պարտավոր եք այս տեղեկությունը ներկայացնել մեկ անգամ. երբ դուք առաջին անգամ դիմեք, կամ տարեկան ձեր հաջորդ իրավասության վերանայման ժամանակ:

Արդյո՞ք այս օրենքը որեւէ ազդեցություն կունենա իմ Food Stamps-ի, CalWORKs կամ Healthy Families նպաստների վրա:

Ոչ: Քաղաքացիության եւ ինքնության պահանջները վերաբերվում են միայն Medi-Cal-ին:

Արդյո՞ք դուք պետք ունեք քաղաքացիության եւ ինքնության մասին բնօրինակ փաստաթղթերի:

Այո: Մենք պահանջում ենք քաղաքացիության եւ ինքնության բնագիր փաստաթուղթը կամ պատճեններ, որոնք հաստատված կլինեն տվող գործակալության կողմից:

Կարո՞ղ եմ ապացույցը փոստով ուղարկել:
Այո: Քաւնքիին պատճեններ կանի եւ փոստով ետ կուղարկի ձեզ: Կամ դուք կարող եք ձեր փաստաթղթերը անձամբ տանել ձեր տեղական Սոցիալական Ապահովության ծառայությունների գրասենյակ: Խնդրեցեք, որ պատճենահանեն եւ անմիջապես ձեզ վերադարձնեն:

Քաղաքացիության եւ ինքնության մասին ընդունելի ապացույցներ

Միացյալ Նահանգների քաղաքացիների կամ քաղաքացի դարձած անձանց համար քաղաքացիություն եւ ինքնություն ապացուցելու ամենահեշտ միջոցը հետեւյալ փաստաթղթերից **մեկն** է.

— Միացյալ Նահանգների առանց սահմանափակման տրված անձնագիր (ժամկետանցներն ընդունվում են) կամ
— Քաղաքացի դառնալու մասին վկայական (N-550 կամ N-570) կամ
— Միացյալ Նահանգների Քաղաքացիության մասին վկայական (N-560 կամ N-561)

– ԿԱՄ –

Եթե դուք չունեք վերեւի փաստաթղթերից որեւէ մեկը, ներկայացրեք՝

Ներքեւում թվարկուած քաղաքացիության մեկ փաստաթուղթ...

- Միացյալ Նահանգների Ծննդյան վկայական (Birth Certificate)
- Ծննդյան մասին տեղեկանք (Certification of Report of Birth) (DS-1350)
- Արտասահմանում Միացյալ Նահանգների քաղաքացուց ծնվելու մասին տեղեկանք (Report of Birth Abroad of a U.S. Citizen) (FS-240)
- Արտաքին նախարարության տեղեկանք ծննդյան մասին (State Department Certification of Birth) (FS-545 կամ DS-1350)
- Միացյալ Նահանգների քաղաքացու անձնագիր (U.S. Citizen Identification Card) (I-197 կամ I-179)
- Ամերիկացի Հնդկացու քարտ (American Indian Card) (I-872)
- Հյուսիսային Մարիանայի քարտ (Northern Marianas Card) (I-873)
- Որդեգրման վերջնական վճիռ (Final Adoption Decree), որը ցույց կտա Միացյալ Նահանգներում ծնված մի վայր
- Միացյալ Նահանգների քաղաքացի ծնողի կողմից տրված ապացույց՝ իրենց օրինական/ֆիզիկական խնամակալության տակ գտնվող, Միացյալ Նահանգներից դուրս ծնված երեխայի որդեգրման մասին (IR-3 կամ IR-4)
- Նախքան 1976թ. հունիսի 1-ի ամսաթվով Միացյալ Նահանգների քաղաքացիական ծառայության ապացույց
- Ծննդյան վայրը ցույց տվող Միացյալ Նահանգների զինվորական ծառայության ապացույց
- Ծնունդի ժամանակ արված Միացյալ Նահանգների հիվանդանոցի արձանագրություն *†
- Կյանքի, բժշկական կամ այլ ապահովագրական արձանագրություն *†
- Ծննդյան օրվանից մինչեւ 3 ամիս ամսաթվով արձանագրված Միացյալ Նահանգների եկեղեցական արձանագրություն, որը ցույց է տալիս Միացյալ Նահանգներում ծննդյան վայր ու ամսաթիվ կամ տարիք
- Դպրոցական վաղ գրանցում, որը ցույց է տալիս Միացյալ Նահանգներում ծննդյան վայր, ընդունելության ամսաթիվ, ծննդյան ամսաթիվ, ծնողի անուններ եւ ծննդյան վայրեր
- Դաշնային կամ նահանգային վիճակագրական արձանագրություն, որը ցույց կտա դիմորդի տարիքը եւ Միացյալ Նահանգների քաղաքացիություն կամ ծննդյան վայր
- Սենեկա–հնդկացիական (Seneca Indian) ցեղային վիճակագրական արձանագրություն *†
- Նավահո հնդկացիների գործերի բյուրոյի ցեղային վիճակագրական արձանագրություն (Bureau of Indian Affairs Navajo Indians tribal census record) *†
- Միացյալ Նահանգների նահանգային վիճակագրության բաժանմունքի ծննդյան գրանցման նշում՝ իբրեւ ներկայիս ողջ անձ (U.S. State Vital Statistics birth registration notification) *†
- Միացյալ Նահանգների քաղաքացիական ծննդյան հետաձգված գրանցում (a delayed U.S. public birth record), որ գրանցվել է անձի ծննդից 5 տարի եւ ավելի հետո) *†
- Ծննդյան պահին ներկա բժշկի կամ մանկաբարձի կողմից ստորագրված հայտարարություն *†
- Հնդկացիական գործերի բյուրոյից Ալյասկայի բնիկների մատյան *†
- Խնամքի կամ խնամքի մասնագիտացված վայրի կամ այլ կազմակերպության ընդունելության թղթեր, որոնք ցույց կտան Միացյալ Նահանգներում ծնված մի վայր *
- Բժշկական արձանագրություն (Medical record) (ոչ պատվաստումների) *†

* Պետք է թվագրված լինի նվազագույնը 5 տարի առաջ, նախքան առաջին Medi-Cal-ի դիմումնագիրը եւ ցույց տա Միացյալ Նահանգներում ծնված մի վայր:
† 16 տարեկանից փոքր երեխաների համար պետք է արված լինի ծննդի ժամանակին մոտ:

Որքան հնարավոր է, դուք **պետք է** ներկայացնեք ցուցակի վերեւի մասում նշված փաստաթուղթ:

Եթե դուք **չեք կարող** ներկայացնել քաղաքացիության այս փաստաթղթերից որեւէ մեկը...

Երկու չափահասներից խնդրեցեք լրացնել եւ ստորագրել Քաղաքացիության մասին հաստատագիր: Չափահասները երկուսն էլ պետք է ունենան ինքնության եւ Միացյալ Նահանգների քաղաքացիության մասին ապացույց, եւ նրանցից մեկը միայն կարող է ձեր ազգականը լինել:

– ԵՎ –

Ներքեւում թվարկուած Ինքնութեան մեկ փաստաթուղթ...

- Վարորդական իրավունք՝ տրված Միացյալ Նահանգների նահանգի կամ տարածքի կողմից՝ լուսանկարով կամ անձը ճշտող այլ տեղեկությամբ
- Դպրոցական ինքնության քարտ՝ լուսանկարով
- Միացյալ Նահանգների զինվորական անձնագիր կամ ստիպողական ծառայության արձանագրություն (U.S. Military I.D. card or draft record)
- Դաշնային, նահանգային կամ տեղական կառավարության ինքնության քարտ վարորդական իրավունքի նման անձը հաստատող տեղեկությամբ
- Միացյալ Նահանգների զինվորականից կախյալ լինելու ինքնության քարտ (U.S. Military dependent identification card)
- Միացյալ Նահանգների անձնագիր (U.S. passport) (սահմանափակությամբ տրված)

- Հնդկացիական Արյան Աստիճանի Վկայական (Certificate of Degree of Indian Blood) կամ այլ՝ Միացյալ Նահանգների Ամերիկյան Հնդկացիական/Ալյասկայի բնիկ ցեղային փաստաթուղթ (U.S. American Indian/Alaska Native Tribal document)
- Միացյալ Նահանգների Ծովային սահմանապահ ուժերի առեւտրական-ծովային քարտ (U.S. Coast Guard Merchant Mariner Card)
- Երեք կամ ավելի հաստատող տիպի փաստաթղթեր, ինչպես աշխատանքային ID քարտ, high school-ի կամ քոլեջի վկայական, ամուսնության վկայական, ամուսնալուծության վճիռ, ինչպես նաեւ կալվածի վավերագրեր/սեփականաթղթեր
- 16 տարեկանից փոքր երեխայի համար կլինիկայի, բժշկի կամ հիվանդանոցի արձանագրություններ
- 16 տարեկանից փոքր երեխայի համար դպրոցի, մանկամսուրի կամ ցերեկային խնամքի գրանցումներ, ներառյալ տեղեկանքներ: Քաունթին կստուգի դպրոցի հետ:
- Հաստատագիր ստորագրված տնօրենի կամ կառավարչի կողմից բնակարանային խնամքի վայրում ապրող հաշմանդամների համար

16 տարեկանից փոքր երեխայի համար, որը չունի քաղաքացիության մասին հաստատագիր, դուք կարող եք ներկայացնել՝

- Ծննդյան վայրը եւ ամսաթիվը ցույց տվող երեխայի ինքնության մասին հաստատագիր՝ ստորագրված երեխայի ծնողի, խնամակալի կամ խնամող ազգականի կողմից:
- Medi-Cal կամ Healthy Families/Medi-Cal միացյալ դիմումնագիր, որը ցույց կտա երեխայի ծննդյան թիվը եւ վայրը եւ որը ստորագրված կլինի երեխայի ծնողի, խնամակալի կամ խնամող ազգականի կողմից:

18 տարեկանից փոքր երեխայի համար կարելի է օգտագործել երեխայի ինքնության մասին հաստատագիր՝ ստորագրված երեխայի ծնողի, խնամակալի կամ խնամող ազգականի կողմից, եթե դպրոցական ID քարտ կամ վարորդական իրավունք տրամադրելի չեն:

Նշում. Ինքնության ժամկետանց փաստաթղթերը ինքնության ընդունելի ապացույցներ են: